

Տ Ե Ս Ի Լ Թ Ի Ֆ Լ Ի Ջ Ի Մ Է Ջ

ՍԱՅՆԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴԵԱՆ 250ԱՄԵԱԿԻՆ

Գիշերը մեղմ կը ծանրանար
Թիֆլիզի վրայ:
Կուր գետն անդին,
Ննջող մանկան շունչին պէս մեղմ
Կ'ելեւէջէր:
Սիրամորմո՛ք քելը սագին
Աշուղական
Անցեալ դրուագ մը կը հեծէր
Ջայնասփիւռէ մը հեռակայ.
Ու մեղեդին կ'արձագանգէր
Հաւաքարի հին քաղերէն վիպատեսիլ...:
Ի լուր երգին սիրամորմո՛ք
Աննիւքական ծաղկանոցներ,
Յայտադրիւրներ կը բացուէին
Խորն աչքերու...:
Արբեցումո՛վ կ'օրօրուէին
Ծառերն ամէն, համբուս վըրայ...:
Ու կը հոսէ՛ր, ու կը յորդէ՛ր
Սիրերգն անմահ հայ աշուղին
Ջայնասփիւռէ մը դաշնաւոր:
Կշռոյթին հետ այդ դիւքական՝
Նոր ոլորտներ, գերիրական
Կ'այցելէի ես սրտատրոփ...
Ու կ'ըսէի. —
Ի՛նչ հանդիպում, Սայեաք-Նովա,
Կարծես շատոնց
Մենք ժամադիր էինք այստեղ,
Թիֆլիզի մէջ քու հընամեայ,
Երեսնէն վերադարձի
Համբուս վըրայ:
Կը հնչէի՛ն Սուրբ Գէորգի
Ջանգերն ամէն, զի՛լ, ցնծագին...
Կնդրուկներու եւ խունկերու
Բոյրին մէջէն երազական՝

Դո՛ւրս կու գայիր
Երգով արբշիւ
Դուն լուսեղէն ոգիի պէս:
Հագած էիր իշխանական
Կարմիր կապան վայելչատես,
Արփունական տօնի գացող
Ասպետի պէս ազնւական:
Քեզ չէր տանջեր
Պալատական Տիկնոջ մ'անյոյս
Եւ ամուլ սէրն անիրական:
Դուն աշխարհի բոլոր սիրուն
Սէրէն գինով էակներուն,
Սիրոյ կարօտ ոգիներուն
Եւ քախծահար պանդուխտներուն
Երջանկութիւնն էիր այլեւս:
Սայեաք-Նովա, հա՛յ բանաստեղծ,
Քու երգդ հիմա համբա՛յ մըն էր,
Բացուած կարծես
Բազմալեզու եղբայրութեան
Սահմաններուն մէջ հոգեկան:
Սագիդ քելէն ահա՛ կրկին
Կը ծորէի՛ն
Սիրոյ կրա՛կ դարձած խօսքերդ
Յանո՛ւն Լոյսին ու Գեղեցկին...:
Ու շունչիդ մէջ
Կարմիր վարդեր եւ յամիկներ
Կը ծաղկէին քաղցրաբուրեան:
Արփայական Միսիքարիչ,
Բանտարկեալները Մետեխի՝
Հորտ ու նոքար
Կարօտաձայն կ'օրհնէին քեզ,
Անցփիդ ի տես:
Գիշերը մեղմ կը տարածուէր
Կուրի ամիսին.
Սիրամորմո՛ք քելը սագին
Դեռ կը հեծէ՛ր կարօտալի,
Ջայնասփիւռէ մը հեռակայ.
«Ղարիբ Պալուլ, դու մի՛ լաց լի...»:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ